34 Արդյո՞ք այն գետին եզերքը

1. Արդյո՞ք այն գետին եզերքը
Մեր ոտքերն պիտի մտնեն,
Ուր սուրբերն ու հրեշտակները
Ցնծությամբ միշտ կքալեն:

Այո՛, մենք ալ ժողովվինք հոն
Բոլոր հրեշտակաց ու սրբոց հետ,
Այն հստակ գետին եզերքը,
Որ վերն՝ աթոռեն կելլե:

2. Այն հստակ գետին եզերքը,
Երբ ուրախությամբ մտնենք,
Մենք ալ հոն երկնից երգերը
Անդադար պիտի երգենք:

3. Այն պայծառ գետին եզերքը
Երբ որ աչքերնիս տեսնեն,
Հայնժամ Աստծո Գառնուկը
Արցունքնիս պիտի սրբե:

4. Այն հանդարտ գետին եզերքը
Քաղցրությամբ կառաջնորդե
Իր հոտին Բարի Հովիվը
Եվ զանոնք հոն կարածե:

5. Այն կենաց գետին եզերքը
Վերջն է մեր պանդխտության,
Հոն լցվի պիտի մեր սիրտը
Քաղցրությամբ, խաղաղությամբ: